Հավելված N 3
ՀՀ կառավարության 2006 թվականի
նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման

Ձև

ՀԱՅՏ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

Ծրագրի անվանումը	*Բյուրեղավան համայնքում մարզադպրոցի կառուցում*
Մարզ	*ՀՀ Կոտայքի մարզ*
Համայնքը /համայնքները	*Բյուրեղավան համայնք* *Բյուրեղավան , Նուռնուս , Ջրաբեր բնակավայրեր*
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	*Բյուրեղավան բնակավայր՝ Երևանից՝ 20 կմ, Հրազդանից՝ 35 կմ* *Նուռնուս բնակավայր՝ Երևանից՝ 30 կմ, Հրազդանից՝ 45 կմ* *Ջրաբեր բնակավայր՝ Երևանից՝ 26 կմ, Հրազդանից՝ 25 կմ*
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	*Բյուրեղավան համայնք՝ 12152 մարդ* *Բյուրեղավան բնակավայր՝ 10991 մարդ* *Նուռնուս բնակավայր՝ 710 մարդ* *Ջրաբեր բնակավայր՝ 451 մարդ*
Սահմանամերձ համայնք/բնակավայր	
Բարձր լեռնային համայնք /բնակավայր	
Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն	*Ոչ*
Համայնքի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝ - ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը, - գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը, - ոռոգման համակարգից	*Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրի ջրամատակարարումն ու ջրահեռացումն իրականացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից 12 ժամյա գրաֆիկով և ունի 2750 բաժանորդ, Ջրաբեր բնակավայրը հանդիսանում է մեծածախ գնորդ, Նուռնուս բնակավայրում և ամառանոցային հատվածում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի մատուցած ծառայություններից օգտվում է 571 բաժանորդ:* *Բյուրեղավան բնակավայրի 2712 տնային տնտեսություններից գազիֆիկացված է 2070-ը (76.4%), Նուռնուս բնակավայրի 156 տնային տնտեսություններից գազիֆիկացված է 92-ը (59%), Ջրաբեր բնակավայրի 92 տնային տնտեսություններից գազիֆիկացված է 68-ը (74.7%),* *Բյուրեղավան համայնքում առկա է 15 կմ երկարությամբ ոռոգման համակարգ, որից Ջրաբեր բնակավայրում օգտվում են բնակչության 100%, իսկ գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը կազմում է 9.5%, Նուռնուս բնակավայրում օգտվում են բնակչության 10%, իսկ գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը կազմում է 10%:*

օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը, - լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ	*Բյուրեղավան համայնքում փողոցային լուսավորության համակարգերը էներգախնայող են(ԼԵԴ):*
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը	*Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում առկա է մարզային ենթակայության մարզադպրոց, ուր հաճախում է 272 երեխա:Նշենք, որ ստեղծման օրվանից մարզադպրոցը չունի շենքային պայմաններ և գործել է հարակից դպրոցի նկուղում և մարզադահլիճում: Մարզադպրոցում գործում է ծյուդոյի,սամբոյի, բռնցքամարտի, ազատ ոճի ըմբշամարտի և ֆուտբոլի 23 խումբ: Մարզադպրոցը տվել է սամբոյի աշխարհի և եվրոպայի փոխչեմպիոններ, եվրոպայի երրորդ մրցանակակիր, Հայաստանի բազմակի չեմպիոններ սամբո և ծյուդո մարզաձևերում: Հաշվի առնելով Բյուրեղավանում ձևավորված մարզական ավանդույթները, Հայաստանի պատիվը բարձր պահած մարզիկների առկայությունը, ինչպես նաև սպորտի ու առողջ ապրելակերպի նկատմամբ հետաքրքրությունների աճի տենդենցը՝ անհրաժեշտություն է առաջացել Բյուրեղավանում նոր մարզադպրոցի կառուցման: Ծրագրի իրականացման խնդիրն է բնակավայրի երեխաներին ապահովել հասանելի մարզական կրթությամբ, նպաստել հայրենական սպորտի զարգացմանը:*
Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին	*Ծրագրի իրականացումը Բյուրեղավան բնակավայրում կլուծի երեխաների մարզական կրթություն ստանալու խնդիրը, կնպաստի նրանց ֆիզիկական և մտավոր զարգացմանը, կնպաստի երեխաների միջև շփումների ձևավորմանը,սպորտի զարգացմանը: Ծրագրային հայտը բխում է Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի դրույթներից և համայնքի հնգամյա զարգացման ծրագրի ռազմավարությունից: Ծրագրի իրականացման նպատակն է Բյուրեղավան համայնքում ունենալ մարզական ուսումնական հաստատության շենք և մեծացնել երեխաների մարզական կրթություն ստանալու հնարավորությունը, ինչպես նաև համայնքի բնակիչների համար ստեղծել պայմաններ տեղում լրացնելու իրենց ֆիզիկական մարզման կարիքները: Ծրագրի իրականացման արդյունքում մարզադպրոց հաճախող երեխաները կունենան սպորտով զբաղվելու ավելի արդիական պայմաններ, ինչը կնպաստի արդյունքների բարելավմանը:*
Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները	*Նոր կառուցվող մարզադպրոցի տեխնիկական բնութագրի կազմում, նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում, շինարական աշխատանքների մրցույթի անցկացում, պայմանագրի կնքում, շինարարության իրականացում:*

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի	*Մանկապարտեզի շենքը նախատեսվում է կառուցել համայնքին սեփականության հանդիսացող հողատարածքի վրա: Շենքը հանդիսանալու է համայնքային գույք և նրա արժեքը կավելանա համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքին:* *Նախատեսվող ծախսերը կապիտալ բնույթի են:*
Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա	*Ծրագրի ուղղակի շահառուների թիվը 272-ն է: Ծրագրի իրականացման արդյունքում երեխաների համար կստեղծվի նորմալ պայմաններ սպորտային կրթություն ստանալու համար: Շահառուները կունենան նորակառույց մարզադպրոց, հագեցած անհրաժեշտ մարզագույքով:*
Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը	*Ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվի նաև ժամանակավոր 23 աշխատատեղ (շինարարներ):*
Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը	*Նախորդ տարվա բյուջեն՝ 494872.7 հազար դրամ.*

	Պլանը	Փաստացին	Տոկոսը
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները այդ թվում՝	662757.6	658705.2	99.3
-Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	419719.1	415256.7	98.9
- Սեփական եկամուտներ	127964.6	123182.3	96.2
-Ֆոնդային բյուջեի եկամուտներ	243038.5	243448.5	100.1
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, որից՝	578820.3	525289.7	90.7
- Վարչական բյուջեի ծախսեր	335781.7	292112.7	86.9
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	243038.6	233177.0	95.9
Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը, որից՝	238038.5	233170.0	97.9
- ճանապարհաշինություն	32296.2	31881.2	98.7
- ջրամատակարարում	149051.3	141351.3	94.8
- առողջապահություն	56691.0	55950.0	98.6

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն	*479188.6 հազար դրամ.*

	Պլանը
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում այդ թվում՝	836650.6
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	429703.5
- սեփական եկամուտներ	129032.0
- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	406947.1

	Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, *որից՝*	754188.6
	- Վարչական բյուջեի ծախսեր	347241.5
	-Ֆոնդային բյուջեի ծախսեր	406947.1
	Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը, *որից՝*	406947.1
	- ընդանուր բնույթի ծառայություններ	2000.0
	-ոռոգում	16000.0
	- ճանապարհաշինություն	51000.0
	- ջրամատակարարում	13457.1
	-բնակարանային շինարարություն	26000.0
	-շրջակա միջավայրի պաշտպանություն	10000.0
	- ընդհանուր բնույթի բժշկական ծառայություն	17490.0
	- հանգստի և սպորտի ծառայություն	47000.0
	- կրթություն	220000.0
	-լուսացույցի տեղադրում	4000.0

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով	***Համայնքի 2022 թվականի բյուջետային մուտքերը՝ ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով, 299582.1 դրամ է:***
Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝ **- շինարարական օբյեկտների նախագծման արժեքը _____ դրամ,** **- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ _____ դրամ,** **- ինժեներաերկրաբանական հետազոտության ծառայության արժեքը՝ _____ դրամ,** **- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ _____ դրամ,** **- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ _____ դրամ,**	**200 000 000 դրամ (100%)**

- գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ _____ դրամ, ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը _____ դրամ	
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը	130 000 000 դրամ (65%)
Այլ ներդրողներ	
Ծրագրի իրականացման փուլողությունը	*Սկիզբ հուլիս 2022թ.* *Տևողությունը՝ ըստ նախագծի*
Ծրագրի ծախսերը	*Կից ներկայացվում է տեխնիկական բնութագիրը:*
Ամսաթիվ	*25 հունվար 2022թ*

Համայնքի տնտեսական պատասխանատու Սարգիս Ղազարյան

Հեռախոս, էլ.Փոստ 093346590, ghazarjan-sargis@mail.ru

Համայնքի ղեկավար _____ Հակոբ Բալասյան

(անուն, ազգանուն)

L.S.